ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«06» Հոկտեմբերի 2025 թ. N 133-Ա/1

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի N 751-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 15-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել՝ խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացի ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

2. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ վերապատրաստման դասընթացները կազմակերպել և անցկացնել հեռավար եղանակով՝ առաջնորդվելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N 119-Ա/1 հրամանով:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ դասընթացի մասին հայտարարությունը (առանց խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների անձնական տվյալները հրապարակելու), ինչպես նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 16-ի N

119-Ա/1 հրամանով հաստատված խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացների թեմաները և ուսումնական նյութերը տեղադրել Նախարարության պաշտոնական կայքերում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց և խնամատար ծնողների ցուցակները, ինչպես նաև այդ անձանց անձնագրերի/նույնականացման քարտերի պատճենները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝

1) դասընթացն ավարտվելուց հետո մեկօրյա ժամկետում ներկայացնել դասընթացն ավարտած, որակավորված մասնակիցների ցանկը՝ դրանում ներառելով մասնակցի անունը, ազգանունը և անձնագրային տվյալները:
2) մինչև սույն թվականի նոյեմբերի 26-ը՝ ներկայացնել հաշվետվություն անցկացված դասընթացների վերաբերյալ՝ ներառելով մասնակիցների առաջարկությունները և գոհունակության գնահատման արդյունքները:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

11/6/2025

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293

Հավելված

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2025 թվականի Հոկտեմբերի 06 *N* 133-Ա *հրամանի*

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂ ԴԱՌՆԱԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԽՆԱՄԱՏԱՐ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Խմբի համարը	Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը	Դասընթացում ընդգրկված ունկնդիրների մշտական բնակության վայրը	Դասընթացի անցկացման եղանակը	Դասընթացի անցկացման ժամկետը	Դասընթացի ծավալը
1	24	1. Տավուշի մարզ, 6 ունկնդիր 2. Լոռու մարզ, 10 ունկնդիր 3. Շիրակի մարզ, 1 ունկնդիր 4. Երևան, 5 ունկնդիր 5. Կոտայքի մարզ, 2 ունկնդիր	Հեռավար	17.11.2025-19.11.2025 10:00-14:30	24 ժամ